Հաստատում եմ
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ
Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի
Տնօրեն________________________Տ.Հովսեփյան
«16» ________10________ 2023թ.

Դասղեկի պլանը քննված է դասղեկի՝ ժողովի կանոնադրու-
թյամբ ու պատշաճությամբ [illegible]
սահմանված գործառույթներից
և ժողովի առանձնահատկություն-
[illegible] պլանից:
[illegible]
[illegible]՝ Գ. [illegible]

# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի ________________________ Վանաձոր
մարզ ________________________ համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23դպրոց
ուսումնական հաստատության անվանումը

III ա
դասարանը

Ելենա Սամվելի Զոթյան
դասարանի ղեկավարի անունը,հայրանունը,ազգանունը

**Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն**

**Ուսումնական տարվա սկիզբ**

1.Կազմել աշակերտների անվանացանկը

2.Կազմել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան

**Ամենօրյա աշխատանքներ**

1.Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում Շաբաթվա աշխատանքներ

1. Անցկացնել դասղեկական ժամեր

2.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

**Ամենամսյա աշխատանքներ**

1.Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Դուրս բերել սովորողների բացակայությունները

3.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից , հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից , դրանք նրբանկատորեն կրևառել դաստիարակական աշխատանքում

4. Իրականացնել դիտարկումներ ուղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈՒԻՊ –ների մշակմանը

5. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում,համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի

միջոցով:

Դասարանի ղեկավարը (այսուհետ ՝ դաղեկ) , իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկոտում տեղեկացնում է դպրոցի տնօրենին ՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

# ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱ Ն ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(*դասարանի ընդհանուր բնութագիրը)* –III[Ա] դասարանում սովորում են 28 աշակերտ, որից 15 աղջիկ և 13 տղա: Բոլորը դպրոց են հաճախում սիրով, պատրաստ, սակայն կան նաև դժվարացողն: Դասերին ակտիվություն են ցուցաբերում բոլորը: Դասարանի սոցիալական վիճակը գնահատվում է լավ: Աշակերտական կոլեկտիվը համերաշխ է:
2. Դպրոց – ընտանիք կապը – Ուսումնասիրել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան պայմանները, անհրաժեշտության դեպքում օգնել մեթոդական խորհուրդներով, ծնողներին ներգրավել դպրոցի դաստիարակչական աշխատանքներին: Դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմքը երեխաների լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ընդհանուր նպատակն է:
3. Գեղագիտական դաստիարակություն – Կազմակերպել էքսկուրսիաներ պատկերասրահ, ցուցահանդեսներ:ԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտային տոմսերով այցելել մանկական տիկնիկային թատրոններ, դիտել մանկական և ամանորյա ներկայացումներ: Կազմակերպել էքսկուրսիա Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան:
4. Բնապահպանական դաստիարակություն – Երեխաներին ծանոթացնել բնությանն ու շրջակա միջավայրին, կենդանական և բուսական աշխարհին: Զրույցների միջոցով կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները, ապահովել մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությանը: Այնպես անել, որ նրանք տանը ունենան սենյակային բույսեր և խնամել այն:
5. Աշխատանքային դաստիարակություն – Դասարանում սահմանել ամենօրյա հերթապահություն. շաբաթօրյակներ դպրոցում և դասարանում: Դասերը կատարել ինքնուրույն, տանը միշտ օգնեն ծնողներին, ունենան իրենց աշակերտական անկյունը և մաքուր պահեն այն: Օգնեն դասընկերներին և մեծահասակներին:
6. Հայրենասիրական դաստիարակություն- ծանթոացնել Հայաստանի խորհրդանիշներին, հերոսների մասին պատմություններ ընթերցել, զրուցել ազգային բանակի մասին, հայ զինվորների կատարած սխրանքների մասին:
7. Ազգային դաստիարակություն- Ծանոթացնել ազգային արժեքներին, հատուկ ուշադրություն դարձնել երեխաների հոգևոր զարգացմանը, ազգային ավանդույթների պահպանմանը, ինչպիսիք են՝ բարոյականությունը, արդարությունը, բարությունը, մեծերի նկատմամբ հարգանքը:
8. Ֆիզիկական դաստիարակություն – Ֆիզկուլտուրայի դասերն անցկացնել առողջ ապրելակերպի, սպորտի կարևորությունն արժևորող զրույցներով :Տեղեկություններ հաղորդել օլիմպիական խաղերի, հայ մարզիկների մասնակցության և նրանց հաջողությունների մասին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| I շաբաթ | Կազմակերպել III դասարանցիների մուտքը դպրոց: Գիտելիքի և դպրության օր: | դասվար | |
| II շաբաթ | Ընտրել դասարանի ավագ, սահմանել ամենօրյա հերթապահություն, ձևավորել ինքնակառավարման անկյուն : Փակ գաղտնի քվեարկությամբ: | դասվար | |
| IIIշաբաթ | Զրույց Անկախության տոնին նվիրված : Ներկայացնել դրոշը, զինանշանը, օրհներգը:Օրհներգը սովորել անգիր: | դասվար | |
| IV շաբաթ | Քննարկել փողոցները և ճանապարհներն անցնելու կանոնները : Ցուցադրել պաստառ | դասվար | |
| V շաբաթ | Քննարկել առողջ ապրելակերպի կանոնները: Տարբերակել առողջ և վնասակար սննդամթերքները: | դասվար | |
| VI շաբաթ | Զրույց <<Ուսուցչի տոն>> թեմայի շուրջ: | դասվար | |
| VII շաբաթ | Զրույց <<Գրադարանավարի օր>> թեմայով: Քննարկել գրադարանից օգտվելու կանոնները: | դասվար | |
| VIII շաբաթ | Զրույց ծխախոտի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված: Քոննարկել ծխախոտի վնասակար հատկությունները: | դասվար | |
| IX շաբաթ | Զրույց Վանաձորի օրվան նվիրված:Ներկայացնել քաղաքի պատմությունը, տեսարժան վայրեր: | դասվար | |
| X շաբաթ | Զրույց<<Ի՞նչու է անհրաժեշտ տանը ունենալ կանաչ անկյուն >> թեմայով:Նշել սենյակային բույսեր, խոսել դրանց կարևորության մասին, ինչպես նաև նշել այն սենյակային բույսերը , որոնք խորհուրդ չի տրվում պահել տանը: | դասվար | |
| XI շաբաթ | Քննարկել «Ինչ ենք հասկանում իսկական ընկեր ասելով » | դասվար | |
| XII շաբաթ | Զրույց առաջադիմության մասին:Խոսել իրենց առաջադիմության և անելիքների մասին: | դասվար | |
| XIII շաբաթ | Քննարկել ուտելու կուլտուրայի կանոնները | դասվար | |
| XIV շաբաթ | Զրույց<< Երկրաշարժի զոհերի հիշատակի օր>> թեմայով: Քննարկել ինչպես պաշտպանվել երկրաշարժի ժամանակ: | դասվար | |

| | | | |
|---|---|---|---|
| XV շաբաթ | Քննարկել կարգապահության կանոնները, վերհիշել դասարանի կարգ ու կանոնները: | դասվար | |
| XVI շաբաթ | Զրույց <<Ամանոր >> թեմայով | դասվար | |
| XVII շաբաթ | Զրույց <<Սուր կենցաղային իրադրությունները և դրանց ազդեցությունը >> թեմայի ծուրջ | դասվար | |
| XVIIIշաբաթ | Զրույց <<Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր, սուր իրադրություններում>> թեմայի շուրջ | դասվար | |
| XIX շաբաթ | Զրույց << Հայկական բանակ>> թեմայով: Ներկայացնել հայկական բանակի կազմավորման պատմությունը: | դասվար | |
| XX շաբաթ | Զրույց <<Արտակարգ իրավիճակների մասին, ազդարարումը և բնակչության գործողությունների հաջորդականությունը>> թեմայի շուրջ | դասվար | |
| XXI շաբաթ | Զրույց <<Ինքնօգնության և փոխօգնության տարրերը՝ կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում>> թեմայի շուրջ: | դասվար | |
| XXII շաբաթ | Զրույց <<Գիրք նվիրելու օր>> թեմայով:Ներկայացնել որեղից և ում պատվին ենք նշում գիրք նվիրելու օրը: | դասվար | |
| XXIII շաբաթ | Զրույց <<Մայրենի լեզվի օր>> թեմայով:Քննարկել մայրենի լեզվի կարևորության դերը մեր կյանքում: | դասվար | |
| XXIVշաբաթ | Քննարկել ինչպես պաշտպանվել բնական աղետներից: | դասվար | |
| XXV շաբաթ | Զրույց« Կանանց տոն » թեմայի շուրջ : Մայրիկների համար գրել գեղեցիկ բարեմաղթանքներ: | դասվար | |
| XXVIշաբաթ | Քննարկել ինչն է լավ , ինչն է վատ կոնֆլիկտի հաղթահարում: | դասվար | |
| XXVIIշաբաթ | Զրույց «Դոնորի օր>> թեմայի շուրջ: Խոսել արյան դոնորության կարևորության մասին՞ | դասվար | |
| XXVIIIշաբաթ | Զրույց «Մայրության և գեղեցկության տոն» թեմայի շուրջ: | դասվար | |
| XXIXշաբաթ | Քննարկել քաղաքավարության կանոնները: | դասվար | |
| XXX շաբաթ | Զրույց <<Ցեղասպանության զոհերի հիշատակի օր>> թեմայի շուրջ:<br>Խոսել Մեծ Եղեռնի մասին: | դասվար | |
| XXXI | Զրույց <<Երկրապահի օր>> թեմայի շուրջ: Քննարկել միության հիմնական նպատակներն ու խնդիրները, հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործում: | դասվար | |
| XXXII | Զրույց<<Հաղթանակի տոն>> թեմայի շուրջ: | դասվար | |

| | | | |
|---|---|---|---|
| XXXIII | Զրույց <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>> թեմայի շուրջ: | դասվար | |
| XXXIV | Զրույց ինչպես կազմակերպել ամառային արձակուրդները, էքսկուրսիա:Հանձնարարել ամառային առաջադրանքներ: | դասվար | |

## ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը,ամիսը, տարեթիվը | Անցկացվող միջոցառման (դասախասություն, զրույցներ,քննարկումներ և այլն) թեման | Պատասխանատու |
|---|---|---|
| 01.09.23 | Կազմակերպել III դասարանցիների մուտքը դպրոց: Գիտելիքի և դպրության օր: | դասվար |
| 07.09.23 | Ընտրել դասարանի ավագ, սահմանել ամենօրյա հերթապահություն, ձևավորել ինքնակառավարման անկյուն : Փակ գաղտնի քվեարկությամբ: | դասվար |
| 14.09.23 | Զրույց Անկախության տոնին նվիրված : Ներկայացնել դրոշը, զինանշանը, օրհներգը:Օրհներգը սովորել անգիր: | դասվար |
| 28.09.23 | Քննարկել փողոցները և ճանապարհներն անցնելու կանոնները : Ցուցադրել պաստառ | դասվար |
| 05.10.23 | Քննարկել առողջ ապրելակերպի կանոնները: Տարբերակել առողջ և վնասակար սննդամթերքները: | դասվար |
| 12.10.23 | Զրույց <<Ուսուցչի տոն>> թեմայի շուրջ: | դասվար |
| 19.10.23 | Զրույց <<Գրադարանավարի օր>> թեմայով: Քննարկել գրադարանից օգտվելու կանոնները: | դասվար |
| 02.11.23 | Զրույց ծխախոտի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված: Քոննարկել ծխախոտի վնասակար հատկությունները: | դասվար |
| 09.11.23 | Զրույց Վանաձորի օրվան նվիրված:Ներկայացնել քաղաքի պատմությունը, տեսարժան վայրեր: | դասվար |
| 16.11.23 | Զրույց<<Ի՞նչու է անհրաժեշտ տանը ունենալ կանաչ անկյուն >> թեմայով:Նշել սենյակային բույսեր, խոսել դրանց կարևորության մասին, ինչպես նաև նշել այն սենյակային բույսերը , որոնք խորհուրդ չի տրվում պահել տանը: | դասվար |
| 23.11.23 | Քննարկել «Ինչ ենք հասկանում իսկական ընկեր ասելով » | դասվար |
| 30.11.23 | Զրույց առաջադիմության մասին:Խոսել իրենց առաջադիմության և անելիքների մասին: | դասվար |

| | | |
|---|---|---|
| 07.11.23 | Քննարկել ուտելու կուլտուրայի կանոնները | դասվար |
| 14.12.23 | Զրույց<< Երկրաշարժի զոհերի հիշատակի օր>> թեմայով: Քննարկել ինչպես պաշտպանվել երկրաշարժի ժամանակ: | դասվար |
| 21.12.23 | Քննարկել կարգապահության կանոնները, վերհիշել դասարանի կարգ ու կանոնները: | դասվար |
| 11.01.24 | Զրույց <<Ամանոր >> թեմայով | դասվար |
| 18.01.24 | Զրույց <<Սուր կենցաղային իրադրությունները և դրանց ազդեցությունը >> թեմայի ծուրջ | դասվար |
| 25.01.24 | Զրույց <<Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր, սուր իրադրություններում>> թեմայի շուրջ | դասվար |
| 01.02.24 | Զրույց << Հայկական բանակ>> թեմայով: Ներկայացնել հայկական բանակի կազմավորման պատմությունը: | դասվար |
| 08.02.24 | Զրույց <<Արտակարգ իրավիճակների մասին, ազդարարումը և բնակչության գործողությունների հաջորդականությունը>> թեմայի շուրջ | դասվար |
| 15.02.24 | Զրույց <<Ինքնօզնության և փոխօզնության տարրերը՝ կենցաղային իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում>> թեմայի շուրջ: | դասվար |
| 22.02.24 | Զրույց <<Գիրք նվիրելու օր>> թեմայով:Ներկայացնել որեղից և ում պատվին ենք նշում գիրք նվիրելու օրը: | դասվար |
| 29.02.24 | Զրույց <<Մայրենի լեզվի օր>> թեմայով:Քննարկել մայրենի լեզվի կարևորության դերը մեր կյանքում: | դասվար |
| 07.03.24 | Քննարկել ինչպես պաշտպանվել բնական աղետներից: | դասվար |
| 14.03.24 | Զրույց« Կանանց տոն » թեմայի շուրջ : Մայրիկների համար գրել գեղեցիկ բարեմաղթանքներ: | դասվար |
| 21.03.24 | Քննարկել ինչն է լավ , ինչն է վատ կոնֆլիկտի հաղթահարում: | դասվար |
| 04.04.24 | Զրույց «Դոնորի օր>> թեմայի շուրջ: Խոսել արյան դոնորության կարևորության մասին՞ | դասվար |
| 11.04.24 | Զրույց «Մայրության և գեղեցկության տոն» թեմայի շուրջ: | դասվար |
| 18.04.24 | Քննարկել քաղաքավարության կանոնները: | դասվար |
| 25.04.24 | Զրույց <<Ցեղասպանության զոհերի հիշատակի օր>> թեմայի շուրջ: Խոսել Մեծ Եղեռնի մասին: | դասվար |
| 02.05.24 | Զրույց <<Երկրապահի օր>> թեմայի շուրջ: Քննարկել միության հիմնական նպատակներն ու խնդիրները, հայրենիքի բարգավաճման և հայ ժողովրդի անվտանգության ապահովման գործում: | |
| 09.05.244 | Զրույց<<Հաղթանակի տոն>> թեմայի շուրջ: | |

| | | |
|---|---|---|
| 16.05.24 | Զրույց <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>> թեմայի շուրջ: | |
| 23.05.24 | Զրույց ինչպես կազմակերպել ամառային արձակուրդները, էքսկուրսիա:Հանձնարարել ամառային առաջադրանքներ: | |

Ծնողական ժողովների թեմատիկան

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 1. Կազմակերպչական հարցեր:<br>2. Դասագրքերի բաշխում :<br>3. Ծնողխորհրդի կազմի ընտրությունը: | Դասվար | |
| Հոկտեմբեր | .Ծանոթացում նոր ուսուցչուհու հետ<br>. Կազմակերպչական հարցեր | Դասվար | |
| Դեկտեմբեր<br>Հունվար | 1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: 2. Հոգեբանական,կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբերակների քննարկում:<br>3. I կիսամյակի գնահատման ամփոփում , առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում:<br>4.արձակուրդային աշխատանքների քննարկում | Դասվար | |
| Մարտ-Ապրիլ | 1. կազմակերպչական հարցերի քննարկում:<br>2. առաջադիմության հարցերի քննարկում ,բացակայությունների ամփոփում: | Դասվար | |
| Մայիս | 1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում:<br>2. գնահատման տարեկան ամփոփում: Առաջադիմության հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ հարցեր | Դասվար | |